ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/20

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհր Անանյանի

Մասնակցությամբ «Գալոպեր» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ՝ Ա. Դոլունցի, Ա. Դավթյանի և Ա. Թադևոսյանի (լիազորագիր տրված՝ 19.02.2019թ.)

Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչներ՝ Գ. Մուրադյանի, Ա. Խաչիկյանի և Հ. Խաչատրյանի (լիազորագիր տրված՝ 20.02.2019թ.)

Քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հետևի բարձմամբ աղբատար ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից 13.02.2019թ. ներկայացված և 15.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/20 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Գալոպեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գալոպեր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 13.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«Երևանի քաղաքապետարանի կողմից անցկացվելիք թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի վերջնաժամկետը սահմանված է մինչև 14.02.2019թ.:

Մրցույթում ներկայացված կոմունալ տեխնիկայի տեխնիկական մասնագրերը համապատասխանում են կոնկրետ Մցենսկի կոմունալ մեքենաշինության գործարանի և Արզամասի կոմունալ մեքենաշինության գործարանի արտադրանքին:

Ընկերությունը հայտնել է, որ նշված մասնագրերով կոմունալ մեքենաները հավաքվում են երկու մեքենաների ապրանքանիշի շասսիների (ամրաշրջանակ) վրա՝ ՄԱԶ և ԿԱՄԱԶ:

Ընկերությունը հայտնել է, որ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83 ծածկագրով մրցույթում շասսիների համար պահանջվող տեխնիկական մասնագրերը համապատասխանում են կոնկրետ ԿԱՄԱԶ ապրանքանիշին և հաշվի առնելով այն փաստը, որ «Գալոպեր» ՍՊԸ-ն Հայաստանում ներկայացնում է ՄԱԶ ապրանքանիշը ու հանդիսանում է ՄԱԶ ընկերության պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում, ուստի Ընկերությունը հայտնել է, որ կցանականար ունենալ հնարավորություն մասնակցելու այս մրցույթին: Ընկերությունը հայտնել է, որ 08.02.2019թ.-ին դիմել է քաղաքապետարան՝ հետևյալ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու խնդրանքով.

1. Հաշվի առնելով, որ նշված տեխնիկայի նպատակային ձեռքբերման հիմնական ցուցանիշները պետք է լինեն կոմունալ սարքավորման ցուցանիշները, ուստի խնդրում ենք շասսիների մասով կատարել տեխնիկական մասնագրերի չնչին փոփոխություն, որպեսզի ՄԱԶ ապրանքանիշը ներկայացված լինի մրցույթին, որը ունի նշված կոմունալ սարքավորումներին ամբողջովին համապատասխանող մոդելներ, որոնք սակայն շասսիների տեխնիկական մասով ունեն չնչին շեղումներ՝ հասկանալի պատճառներով, քանի որ չի կարող երկու տարբեր շասսի արտադրող ընկերությունների արտադրանքը

ունենալ նույնությամբ կրկնվող տեխնիկական մասնագրերով մոդելներ, սակայն կարող է ունենալ համարժեք մոդելներ:

2. Մասնագրերում փոփոխություններ չանելու դեպքում՝ արդյոք ստորև ներկայացված մոդելները, մրցույթին ներկայացնելու դեպքում, կդիտարկվեն համարժեք նշված մրցույթի պահանջներին, թե՝ ոչ: Տեղյակ լինելով այն հանգամանքից, որ նշված տեխնիկական մասնագրերով կարող են լինել նաև ոչ ԱՊՀ երկրների արտադրության այլ մոդելներ՝ մասնավորապես Վոլվո, Իվեկո և Սկանիա, շեշտում ենք հատկապես ՄԱՋ և ԿԱՄԱՋ ապրանքանիշերի մրցակցության հանգամանքը, քանի որ նշված մասնագրերին համապատասխանող վերոնշյալ այլ բոլոր ապրանքանիշերի կոմունալ մեքենաները գտնվում են գնային շատ ավելի բարձր սեգմենտում և նշված մրցույթում ՄԱՋ ապրանքանիշի կոմունալ մեքենաները դուրս թողնելով մասնակցության հնարավորությունից՝ ԿԱՄԱՋ ապրանքանիշի կոմունալ մեքենաները նշված մրցույթում կլինեն մրցակցությունից դուրս, որը անթույլատրելի է պետական գնումների դեպքում: Չ/Բ 1. Առաջարկվող Տեխնիկական մասնագրեր Արտադրման տարեթիվը -2019 Անվային բանաձևը-4x2 Շարժիչի հզորությունը, ձ. Ուժ-230 Թափքի տարողունակությունը, մ3-16 Բարձման տեսակը- Հետևի Ամբողջական քաշը, կգ-20100 Աղբի խտացման գործակիցը, անգամ-Մինչև 7 Բեռնվող աղբի քաշը, կգ -8060 Ամրաշրջանակի մոնտաժային չափերը, մմ-4640 Աշխատանքային մասերի փոխանցումը –հիդրավլիկ Վառելիքի տեսակը— դիզելային Երաշխիքը ամիս/կմ վազք-24/75000 Մանիպուլյատորի երաշխիքը ամիս /ժամ -18/1000 Մանիպուլյատորի բեռնատարողությունը, կգ -700 Մեքենայի չափսերը Երկարություն x լայնություն x բարձրություն-8500/2550/3800 Չ/Բ 2. Առաջարկվող Տեխնիկական մասնագրեր Արտադրման տարեթիվը -2019 Անվային բանաձևը-6x4 Շարժիչի հզորությունը, ձ. Ուժ-270 Թափքի տարողունակությունը, մ3-22 Բարձման տեսակը-Հետևի Ամբողջական քաշը, կգ-26500 Աղբի խտացման գործակիցը, անգամ-Մինչև 8 Բեռնվող աղբի քաշը, կգ-11000 Ամրաշրջանակի մոնտաժային չափերը, մմ-5550 Աշխատանքային մասերի փոխանցումը-հիդրավլիկ Վառելիքի տեսակը-դիզելային Երաշխիքը ամիս/կմ վազք-24/75000 Մանիպուլյատորի երաշխիքը ամիս /ժամ-18/1000 Մանիպուլյատորի բեռնատարողությունը, կգ-700 Մեքենայի չափսերը Երկարություն x լայնություն x բարձրություն-9700/2550/3800":

Ընկերությունը նշել է, որ ի պատասխան Ընկերության վերոգրյալ հարցերի՝ քաղաքապետարանից 12.02.2019թ.-ին ստացվել է պարզաբանումներ, որոնք Ընկերության կարծիքով, անհիմն են և չպատճառաբանված, մասնավորապես. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով գնման ընթացակարգի գնման առարկաների տեխնիկական մասնագրերը կոնկրետ հղումներ չեն պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին և հնարավորություն է տալիս յուրաքանչյուր շահագրգիռ կազմակերպությանը մասնակցելու հայտարարված մրցույթին:

1-ին և 2-րդ չափաբաժինների վերաբերյալ առաջարկությունների մասով ընդունելի չեն մասնագրերում պահանջվող շարժիչների վերաբերյալ համապատասխանաբար 260-300 ձուժ և 280-300 ձուժ հզորություններով շարժիչները ավելի ցածր՝ 1-ին չափաբաժնում 230 ձուժ և 2-րդ չափաբաժնում 270 ձուժ հզորությամբ փոխարինելու առաջարկները՝ ելնելով Երևանի ռելիեֆային և բնակլիմայական առանձնահատկություններից, որն առաջացնում է պահանջ ունենալ բարձր հզորության շարժիչով մեքենաներ, որոնք շահագործման երկարակեցության, ինչպես նաև վառելիքա-քսուկային նյութերի օգտագործման տեսանկյունից առավել արդյունավետ են նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար: Ընդունելի կլիներ, որ մասնակիցները իրենց առաջարկները ներկայացնեին այն տեխնիկական բնութագրերին համապատասխան, որոնք նշված են մասնագրերում՝ թեկուզև Ձեր 1-ին և 2-րդ չափաբաժինների վերաբերյալ մյուս առաջարկությունների վերաբերյալ սկզբունքորեն առարկություն չունենք: Խնդիրը կայանում է նրանում, որ պահանջվող տեխնիկայի ընթացային մասի /շասսի/ չափորոշիչները սահմանվել են այնպես, որ դրանք հիմնականում համապատասխանում են «ԿԱՄԱԶ» մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական տվյալներին՝ բացառելով միևնույն կամ մոտ գտնվող գնային սեգմենտում այլ մակնիշի ավտոմեքենաների մատակարարի փաստացի մասնակցություն մրցույթին: Միաժամանակ նշեմ նաև, որ քաղաքապետարանի պատասխանն անհիմն է նաև այն պատճառով, որ 230ձ/ու հզորությամբ շարժիչով «ՄԱԶ» ընկերությունը թողարկում է շատ ավելի բեռնատարողությամբ ավտոմեքենաներ, օրինակ. «ՄԱԶ 555102-220» բեռնատար, որը կախված թափքի տեսակից, նախատեսված է մինչև 12 տոննա բեռի փոխադրման

համար, իսկ քաղաքապետարանի կողմից թիվ 1 լոտով պահանջվող տեխնիկան նախատեսված է մինչև 8-9 տոննա բեռի փոխադրման համար: Իսկ ինչ վերաբերվում է Երևանի ռելիեֆային և բնակլիմայական առանձնահատկություններին, ապա գտնում եմ, որ 10-20 ձ/ուհզորության տարբերությունը որևէ կերպ չի կարող էական լինել, սակայն կոնկրետ «ԿԱՄԱԶ» մակնիշի ավտոմեքենաների շարժիչների հզորությունները նշելով տեխնիկական պայմաններում, ակնհայտ է դառնում, որ դա միտված է անհավասար մրցակցային պայմաններ ստեղծելուն և արհեստական խոչընդոտ է հանդիսանում մեր ընկերության մասնակցությանը:

Ընկերությունը նշել է նաև, որ մատակարարման ժամկետը նշված է չափազանց կարճ ժամկետ՝ հաշվի առնելով, որ պահանջվող ավտոմեքենաները համարվում են հատուկ նշանակության տեխնիկա, որի արտադրության համար շատ ավելի երկար ժամկետ է պահանջվում, ուստի այս հանգամանքը ևս կասկածների տեղիք է տալիս մրցույթի անցկացման անաչառության վերաբերյալ:

Ընկերությունը հայտնել է, վերոգրյալ գործողությունների արդյունքում մրցույթի մասնակիցների համար ստեղծվել է անհավասար մրցակցային պայմաններ, ինչպես նաև չհիմնավորված խոչընդոտներ են ստեղծվել գնումների գործընթացքում մրցակցության ապահովման համար համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-51 հոդվածների, ինչպես նաև 50-րդ հոդվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի ա/ և բ/ կետերի դրույթներով, Ընկերությունը խնդրել է՝

1. արգելել Երևանի զաղաքապետարանին կայացնել հաղթողի վերաբերյալ համապատասխան որոշում և կնքել պայմանագիր,

2. պարտադրել Երևանի զաղաքապետարանին կայացնել համապատասխան նոր որոշում՝ չեղյալ հայտարարելով թիվ ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83 ծածկագրով մրցույթը և դրա արդյունքները, ինչպես նաև մրցույթի առարկայի վերաբերյալ կազմելով օրենսդրությանը համապատասխանող նոր տեխնիկական մասնագրեր և հայտարարել նոր մրցույթ:

Ընկերությունը 04.03.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից արդյունքում այդպես էլ չի կատարվել գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից առաջադրված պահանջը, այն է՝ Երևանի քաղաքապետարանի կողմից որոշված գնային սեգմենտում ներկայացնել առնվազն երեք արտադրողի ապրանքներ, որոնց տեխնիկական բնութագիրը համապատասխանում է քաղաքապետարանի կողմից կազմված տեխնիկական մասնագրերին: Ինչ վերաբերվում է քաղաքապետարանի կողմից ներկայացված միայն "ՄԱԶ" մակնիշի 2 ավտոմեքենաների տվյալներին, ապա դրանք չեն համապատասխանում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ներկայացրած պահանջին, քանի որ.

Ընկերությունը նշել է, որ եթե ուշադրություն դարձնենք գներին, ապա ակնհայտ է, որ դրանք արդեն իսկ բարձր են քաղաքապետարանի կողմից նշված լոտերի առավելագույն գներից, մեկը՝ 5950000 ՌԴ ռուբլի, որը ՀՀ ԿԲ-ի փոխարժեքով կազմում է՝ 5950000x7.44=44268000 ՀՀ դրամ, այն դեպքում, երբ առավելագույն արժեքը սահմանված է 39 000 000 ՀՀ դրամ, իսկ մյուսը՝ 5100000 ՌԴ ռուբլի, որը ՀՀ ԿԲ-ի փոխարժեքով կազմում է՝ 5100000x7.44=37944000 ՀՀ դրամ, այն դեպքում, երբ առավելագույն արժեքը սահմանված է 36 000 000 ՀՀ դրամ:

Ընկերությունը նշել է, որ այս արժեքներին պետք է գումարվի նաև այդ ավտոմեքենաների ՌԴ-ից տեղափոխման, ԱԱՀ-ի վճարման և մատակարարի նվազագույն շահույթի գումարները, ինչը կավելացնի այդ գները առնվազն 25%-ով, որի արդյունքում քաղաքապետարանի կողմից ներկայացված ընդամենը մեկ արտադրողի ավտոմեքենաները կրկին չեն համապատասխանում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ներկայացված պահանջին՝ չեն գտնվում նույն գնային միջակայքում /սեգմենտում/, ուստի դրանք հայտով նույնիսկ ներկայացվելու դեպքում, միևնույնն է՝ գնումների համակարգի կողմից ավտոմատ կերպով մերժվելու էին և գնումներին մասնակցելու էր միայն "ԿԱՄԱԶ" մակնիշի ավտոմեքենաները:

Ի լրումն վերոգրյալի, Ընկերությունը նշել է, որ քաղաքապետարանը "ՄԱԶ" արտադրող գործարանից փորձել է ստանալ տեղեկատվություն՝ իր կողմից նշված գնային սեգմենտում համապատասխան տեխնիկական տվյալներով աղբատար ավտոմեքենաների գոյության վերաբերյալ, որին ի պատասխան՝ գործարանը

բացասական պատասխան է տվել: Դրա փոխարեն համացանցից՝ ոչ պաշտոնական կայքից, գտել է ինչ-որ հայտարարություններ, որոնցում նշված ավտոմեքենաները տեխնիկապես չեն համապատասխանում քաղաքապետարանի կողմից հրապարակած տեխնիկական մասնագրերին գնային միջակայքին: Ընկերությունը հայտնել է, որ գրությանը կից ներկայացվում է նաև նշված փաստը հաստատող գրություն "ՄԱԶ" գործարանից, ինչպես նաև մրցույթի պայմաններին իրականում համապատասխանող "ՄԱԶ" մակնիշի ավտոմեքենաների մոդելները:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հրավերով նշված ցանկալի 20-օրյա ժամկետը ողջամիտ ժամկետ չէ, որպեսզի մրցույթի մասնակիցը շահելու դեպքում հնարավորություն ունենա պատվիրել արտադրող գործարանում նշված ավտոմեքենաների քանակը, տեղափոխել դրանք ՀՀ, մաքսազերծել և մատակարարել քաղաքապետարանին:

Ընկերությունը նշել է, որ նշված ժամկետը ևս իր հերթին վկայում է այն մասին, որ մասնակիցների համար ի սկզբանե ստեղծվել է անհավասար պայմաններ:

Ընկերությունը նշել է, որ քաղաքապետարանն այդպես էլ չկատարեց բողոքի քննության ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից առաջադրված պահանջը՝ ներկայացնելու իր կողմից հրապարակված տեխնիկական մասնագրերին համապատասխանող առնվազն երեք պաշտանական արտադրողի կողմից ներկայացված աղբատար ավտոմեքենաներ, որոնք կգտնվեին միևնույն գնային միջակայքում /սեգմենտում/: Ընկերությունը նշել է, որ քաղաքապետարանը դա չէր էլ կարող անել, որովհետև այդպիսի ավտոմեքենաներ պարզապես չկան, քանզի մրցույթի տեխնիկական մասնագրերն ի սկզբանե այնպես են կազմվել, որպեսզի դրանց համապատասխանեն միայն "ԿԱՄԱԶ" մակնիշի ավտոմեքենաները և մրցույթը հաղթի դրանց մատակարարը:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ ակնկալում է, որ քննության արդյունքում կկայացվի արդար և օրինական որոշում, ինչի արդյունքում չեղյալ կհայտարարվի թիվ ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83 ծածկագրով մրցույթ – էլեկտրոնային աճուրդի արդյունքները, Երևանի Քաղաքապետարանը կկազմի օրենսդրությանը համապատասխանող և հնարավոր մասնակիցների համար հավասար պայմաններ

ստեղծող ու արհեստական խոչնդոտները բացառող նոր տեխնիկական մասնագրեր և կհայտարարվի նոր մրցույթ»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.02.2019թ. ժամը 10:45-ին և 27.02.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

Երևանի քաղաքապետարանը 25.02.2019թ. թիվ 45/3202 գրությամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

««ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով մրցույթի բողոքի շրջանակում Երևանի քաղաքապետարանի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում տրամադրվում է մի քանի արտադրող ընկերությունների, մասնավորապես՝ ՄԱԶ, ՄԵՐՍԵԴԵՍ, ՎՈԼՎՈ և ԻՍՈՒԶՈՒ մակնիշի նմանատիպ մոդելների մեքենաների տեխնիկական տվյալներ, որոնց շարժիչների հզորությունները համապատասխանում են մրցույթի հրավերով սահմանված մասնագրերի պահանջներիին, որով փաստվում է, որ «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր չէ:

Ամփոփելով վերոգրյալը, Երևանի քաղաքապետարանը նշել է, որ որպես Պատվիրատու իր գործողությունների արդյունքում չի ստեղծել անհավասար մրցակցային պայմաններ մրցույթի մասնակիցների համար և արհեստական կերպով խոչընդոտ չի ստեղծել մրցույթին մասնակցել ցանկացող որևէ ընկերության համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.02.2019թ. ժամը 10:45-ին և 27.02.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ԱՄ-2019/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հետևի բարձմամբ աղբատար ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

2. Աճուրդի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

չափաբաժնի համարը	անվանումը եւ ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
1	բեռնատարներ 1	Արտադրման տարեթիվը 2019 Անիվային ֆորմուլա 4x2 Շարժիչի հզորությունը ձ/ու 260-300 Թափքի ծավալը, մ3 16 Բարձումը Հետևի բարձմամբ Մանիպուլյատորի Բեռնատարողությունը, կգ 700-800 Մեքենայի ընդհանուր քաշը, կգ 20000-25000 Խտացման գործակիցը: Մինչև 7 Բեռնվող աղբի քաշը, կգ 8000-9000 Ամրաշրջանակի բնապահպանական ստանդարտ Euro-3 Ամրաշրջանակի մոնտաժային երկարությունը, մմ 4700-5500 Չափսեր, մմ Երկարություն x լայնություն x բարձրություն 8000 x 2500 x 3700 9000 x 2600 x 3900 Աշխատանքային մասերի փոխանցման տեսակը Հիդրավլիկ Վառելիքի տեսակը Դիզել Երաշխիք, ամիս/կմ 24/75000 Մանիպուլյատորի երաշխիք, ամիս/աշխ.ժամ 18/1000
	բեռնատարներ 2	Արտադրման տարեթիվը 2019 Անիվային ֆորմուլա 6x4 Շարժիչի հզորությունը ձ/ու 280-300 Թափքի ծավալը, 22 Բարձումը Հետևի բարձմամբ Մանիպուլյատորի բեռնատարողությունը, կգ 700-800 Մեքենայի ընդհանուր քաշը, կգ 22000-25000 Խտացման գործակիցը Մինչև 7

2		Ամրաշրջանակի բնապահպանական ստանդարտ Euro- 3 Բեռնվող աղբի քաշը, կգ 11000-12000 Ամրաշրջանակի մոնտաժային երկարությունը, մմ 5500-6000 Աշխատանքային մասերի փոխանցման տեսակը Հիդրավլիկ Չափսեր, մմ Երկարություն x լայնություն x բարձրություն 9000 x 2500 x 3700 9300 x 2600 x 3900 Վառելիքի տեսակը Դիզել Մեքենայի երաշխիք, ամիս/կմ 24/75000 Մանիպուլյատորի երաշխիք, ամիս/աշխ. ժամ 18/1000

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Գալոպեր» ՍՊԸ-ի 13.02.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, Երևանի քաղաքապետարանի 25.02.2019թ. թիվ 45/3202 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանութ-յանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. ***<u>Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը</u>***:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հետևի բարձմամբ աղբատար ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

Աճուրդի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

չափաբաժնի համարը	անվանումը եւ ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
1	բեռնատարներ 1	Արտադրման տարեթիվը 2019 Անիվային ֆորմուլա 4x2 Շարժիչի հզորությունը ձ/ու 260-300 Թափքի ծավալը, մ3 16 Բարձումը Հետևի բարձմամբ Մանիպուլյատորի Բեռնատարողությունը, կգ 700-800 Մեքենայի ընդհանուր քաշը, կգ 20000-25000 Խտացման գործակիցը: Մինչև 7 Բեռնվող աղբի քաշը, կգ 8000-9000 Ամրաշրջանակի բնապահպանական ստանդարտ Euro-3 Ամրաշրջանակի մոնտաժային երկարությունը, մմ 4700-5500 Չափսեր, մմ Երկարություն x լայնություն x բարձրություն 8000 x 2500 x 3700 9000 x 2600 x 3900 Աշխատանքային մասերի փոխանցման

		տեսակը Հիդրավլիկ Վառելիքի տեսակը Դիզել Երաշխիք, ամիս/կմ 24/75000 Մանիպուլյատորի երաշխիք, ամիս/աշխ.ժամ 18/1000
2	***բեռնատարներ 2***	Արտադրման տարեթիվը 2019 Անիվային ֆորմուլա 6x4 Շարժիչի հզորությունը ձ/ու 280-300 Թափքի ծավալը, 22 Բարձումը Հետևի բարձմամբ Մանիպուլյատորի բեռնատարողությունը, կգ 700-800 Մեքենայի ընդհանուր քաշը, կգ 22000-25000 Խտացման գործակիցը Մինչև 7 Ամրաշրջանակի բնապահպանական ստանդարտ Euro- 3 Բեռնվող աղբի քաշը, կգ 11000-12000 Ամրաշրջանակի մոնտաժային երկարությունը, մմ 5500-6000 Աշխատանքային մասերի փոխանցման տեսակը Հիդրավլիկ Չափսեր, մմ երկարություն x լայնություն x բարձրություն 9000 x 2500 x 3700 9300 x 2600 x 3900 Վառելիքի տեսակը Դիզել Մեքենայի երաշխիք, ամիս/կմ 24/75000 Մանիպուլյատորի երաշխիք, ամիս/աշխ. ժամ 18/1000

«Գալոպեր» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով, ինչպես նաև ԳԲՔԱ-ԱՄ-2019/20 բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստերի ընթացքում Ընկերության ներկայացուցիչները հայտնել են, որ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով մրցույթի տեխնիկական մասնագրերը համապատասխանում են կոնկրետ ԿԱՄԱԶ ապրանքանիշին և սահմանափակում են այլ արտադրողների միևնույն կամ մոտ գտնվող գնային սեգմենտում այլ մակնիշի ավտոմեքենաների մատակարարի մասնակցությունը մրցույթին:

Երևանի քաղաքապետարանը 25.02.2019թ. թիվ 45/3202 գրությամբ հայտնել է, որ «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի շրջանակում Երևանի քաղաքապետարանի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում տրամադրվում է մի քանի արտադրող ընկերությունների, մասնավորապես՝ ՄԱԶ, ՄԵՐՍԵԴԵՍ, ՎՈԼՎՈ և ԻՍՈՒԶՈՒ մակնիշի նմանատիպ մոդելների մեքենաների տեխնիկական տվյալներ, որոնց շարժիչների հզորությունները համապատասխանում են մրցույթի հրավերով սահմանված մասնագրերի պահանջներիին, որով փաստվում է, որ «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր չէ:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Միաժամանակ Կարգի 22-րդ կետը սահմանում է, որ ***<u>գնման առարկայի բնութագրերը</u> և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները <u>սահմանելիս</u> <u>պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն</u> <u>մեկից ավելի հնարավոր մասնակիցներ</u>***:

Այսպիսով, վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ:

Պատվիրատուի կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրված և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից համապատասխան համացանցային կայքերում առկա տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թեև Պատվիրատուի կողմից ներկայացված ՄԱԶ, ՄԵՐՍԵԴԵՍ, ՎՈԼՎՈ և ԻՍՈՒԶՈՒ մակնիշի մեքենաների շարժիչների հզորությունները համապատասխանում են Աճուրդի հրավերով սահմանված պահանջներին, այնուամենայնիվ արձանագրում եմ, որ Աճուրդի տեխնիկական բնութագրով սահմանված այլ մասնագրերի մասով չեն համապատասխանում:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ եմ համարում նշել այն փաստը, որ վերը նշված մեքենաները գտնվում են ավելի բարձր գնային սանդղակում, մինչդեռ Պատվիրատուի կողմից Աճուրդի շրջանակներում սահմանվել է գնային սահմանափակումներ, այն է՝ 1-ին չափաբաժնի մասով 36 000 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի մասով՝ 39 000 000 ՀՀ դրամ:

Ընդ որում, արձանագրում եմ, որ թեև մեքենաների շարժիչների հզորությունները նշվել են միջակայքով, այնուամենայնիվ գտնում եմ, որ միջակայքը սահմանվել է սեղմ, որը նույնպես սահմանափակում է հնարավոր մասնակիցների մասնակցությունը Աճուրդին, քանի որ դրանք սահմանվել են այնպես, որ նույնիսկ այս մասով համապատասխանելու

պարագայում, հրավերով սահմանված այլ մասնագրերի մասով ակնհայտ կերպով արձանագրվում են անհամապատասխանություններ:

Դրա հետ մեկտեղ, արձանագրում եմ նաև, որ Պատվիրատուն, Աճուրդի հրավերով որոշ մասնագրերի համար սահմանելով ***կոնկրետ չափսեր*** և **չնշելով միջակայքեր**, օրինակ՝ բնապահպանական ստանդարտը՝ Euro-3, այնինչ՝ պետք է նշվեր նվազագույնը Euro-3, թափքի ծավալը 1-ին չափաբաժնի համար սահմանելով կոնկրետ 16 մ^3, իսկ 2-րդ չափաբաժնի համար սահմանելով 22 մ^3, սահմանափակել է հնարավոր մասնակիցների մասնակցությունը, քանի որ նշված չափորոշիչներին համապատասխանելու պարագայում ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այլ չափորոշիչների մասով առկա են անհամապատասխանություններ:

Անհրաժեշտ եմ համարում նշել նաև, որ Աճուրդի տեխնիկական բնութագրում մատակարարման ժամկետը ձևակերպված է այնպես, որ կարող է մասնակիցների կողմից տարակերպ մեկնաբանության հիմք հանդիսանալ:

Այսպիսով, արձանագրում եմ, որ Երևանի քաղաքապետարանի կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ԳԲՔԱ-ԱՄ-2019/20 բողոքի քննության շրջանակներում չներկայացվեց և չհիմնավորվեց այն փաստը, որ Աճուրդի հրավերի գնման առարկային ներկայացվող չափանիշները սահմանվել են այնպես, որ դրանց բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ, հետևաբար գտնում եմ, որ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով աճուրդի գնման առարկայի տեխնիկական բնութագիրը՝ գնման առարկայի մասով հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, հավասար պայմաններ չի ապահովում հնարավոր մասնակիցների համար՝ սահմանափակելով վերջիններիս մասնակցությունը գնման ընթացակարգին:

Ելնելով վերոգրյալից, գտնում եմ, որ Աճուրդի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, ուստի նման պայմաններում «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքն հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից 13.02.2019թ. ներկայացված բողոքը բավարարել, մասնավորապես՝

1. պարտավորեցնել «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին փոփոխելու «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրերը՝ այն համապատասխանեցնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

2. սույն որոշումը ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հայտերը բացված լինելու դեպքում՝ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/83» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**